ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՊԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ, ք. Երևան «20» հունիսի 2019թ.

«ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար **Էդգար Գևորգյանի**, ով գործում է **կանոնադրության** հիման վրա (այսուհետ՝ **Պահատու**) մի կողմից, և **«Զյունիկ Տերմինալ» ՍՊԸ-ն** (գրանց. համարը՝ 278.110.04554, գրանց. ամսաթիվը՝ 18.11.2010թ.), ի դեմս տնօրեն՝ Լևոն Մարգարյանի (այսուհետ՝ **Պահառու**) մյուս կողմից, այսուհետ միասին հիշատակման դեպքում՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ».

- Արձանագրելով, որ 2017թ. հոկտեմբերի 15-ին Պահատուի կողմից տնտեսվարող սուբյեկտից մաքսային կանոնների խախտման պատճառով վերցրել և Ապրանքը տեղափոխող բեռնատարի վարորդի ու Պահատուի աշխատակցի ուղեկցությամբ Պահառուի պահպանությանն է հանձնվել 12,7 տոննա յուղանման զանգված (այսուհետ՝ Ապրանք),
- Արձանագրելով, որ Ապրանքի հանձնման պահին և մինչև սույն Պայմանագրի կնքումը Կողմերին հստակ հայտնի չի եղել, թե Պահառուին Ապրանքը որպես պատշաճ հանձնող կողմ ով է հանդես գալիս՝ Պահատուն, թե տնտեսվարող սուբյեկտը և այդ պատճառով Կողմերը պահպանության պայմանագիր չեն կնքել և որ միայն հիմա է պարզ դարձել, որ որպես Ապրանքը պահպանության հանձնող պատշաճ կողմ հանդես է գալիս Պահատուն,
- Հիմք ընդունելով.

ա) ԵՏՄ Մաքսային օրենսգրքի 410 հոդվածի 2-րդ մասի դրույթը, այն է.

«2. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի հարաբերությունները հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ ձևավորվում են պայմանագրային հիմքի վրա»:

բ) «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 3-րդ մասի դրույթը, այն է.

«3. Ապրանքները պահպանության հանձնող անձանց և ժամանակավոր պահպանման պահեստների կազմակերպչի միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրերով»:

Կողմերը կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պահառուն սույն պայմանագրով սահմանված պայմաններով 2017թ. հոկտեմբերի 15-ին ընդունել, պարտավորվել է պահպանել Պահատուի կողմից երրորդ անձից վերցված և Պահառուին հանձնված 12,7 (տասներկու ամբողջ յոթ տասնորդական) տոննա ընդհանուր քաշով յուղանման զանգված (Ապրանք) ՀՀ, ք. Երևան Արշակունյաց պող. 9/2 հասցեում գտնվող ժամանակավոր պահպանության պահեստում և պարտավորվում է սույն Պայմանագրի կնքման պահից պահպանել և Պահատուի առաջին իսկ պահանջով պահպանված վիճակում վերադարձնել Ապրանքը Պահատուին կամ Պահատուի կողմից նշված այլ անձի:

1.2. Պահատուն պարտավորվում է Ապրանքն ամբողջությամբ Պահառուից հետ վերցնել իր աշխատակցի կամ երրորդ անձի միջոցով ոչ ուշ, քան մինչև 2019թ. հուլիսի 15-ը ներառյալ:

(Պահատուի ստորագր.) (Պահառուի ստորագր.)

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պահատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ Ապրանքը կամ դրա մի մասը վերցնել Պահառուից,

2.1.2. պահանջել Պահառուից ձեռնարկելու սույն պայմանագրով, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված միջոցներն Ապրանքի պահպանվածությունն ապահովելու համար:

2.2. Պահատուն պարտավոր է՝

2.2.1. Ապրանքը կամ դրա մի մասը պահանջել աշխատանքային օրերին:

2.2.2. Ապրանքի ստացման պահին կնքել հանձման-ընդունման ակտ:

2.2.3. Կատարել վճարումները՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

2.3. Պահառուն իրավունք ունի՝

2.3.1. Ապրանքն ի պահ հանձնել երրորդ անձանց միայն Պահատուի գրավոր համաձայնությամբ:

2.4. Պահառուն պարտավոր է՝

2.4.1. Պահպանել Ապրանքը և ապահովել Ապրանքի պատշաճ պահպանությունը:

2.4.2. Վերադարձնել Ապրանքն այն վիճակում, որով նա ի պահ է ընդունել:

2.4.3. Պահատուի կողմից պահանջագրում նշված օրը հանձնել պահանջագրում նշված տեսակի և քանակի Ապրանք Պահատուին կամ նրա կողմից նշված անձին:

2.4.4. Պահատվության հանձնված Ապրանքի պահպանությունն ապահովելու նպատակով Պահառուն ձեռնարկում է բոլոր միջոցները, որոնց պարտադիր լինելը նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով կամ դրանցով սահմանված կարգով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ապրանքի պահատվության արժեքը պահպանության վերցնելու օրվանից մինչև Ապրանքը Պահատուին կամ նրա կողմից նշած անձին հանձնելու պահը, որը սույն Պայմանագրի համաձայն չի կարող տեղի ունենալ ավելի ուշ քան մինչև 2019թ. հուլիսի 15-ը ներառյալ, կազմում է 1 908 810 (մեկ միլիոն ինը հարյուր ութ հազար ութ հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը, որը ենթակա է վճարման Պահատուի կողմից Պահառուին սույն Պայմանագրի կնքման պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում Պահառուի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանգիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից: Պայմանագրի պայմանները տարածվում են Կողմերի միջև 2017թ. հոկտեմբերի 15-ից միմյանց միջև սույն Պայմանագրում նշված Ապրանքի պահպանության շուրջ ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը:

5. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և

(Պահատուի ստորագրությունը)

(Պահառուի ստորագրությունը)

որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Կողմերը չպետք է հայտնեն երրորդ անձանց սույն պայմանագրի վերաբերյալ կամ սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման հետ կապված որևէ գաղտնի տեղեկատվություն, բացի Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

6.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պահառու	Պահատու
«Ձյունիկ Տերմինալ» ՍՊԸ	«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ՀՀ ք. Երևան Արշակունյաց 9/2	Հասցե՝ ՀՀ ք. Երևան Մ. Խորենացու փ. 3,7
ՀՎՀՀ՝ 00453834	ՀՎՀՀ՝ 02647057
Բանկը՝ «Արարատբանկ» ԲԲԸ	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ՝ 1510011464720100	Հ/Հ՝ 9000135740018
Տնօրեն՝	Գլխավոր քարտուղար՝
_____/ Լ. Մարգարյան	_____/ Է. Գևորգյան

(Պահառուի ստորագր.)

(Պահառուի ստորագր.)